ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 1323-Ա

ԳՈՒՅՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 144-րդ հոդվածի 2-րդ և 145-րդ հոդվածի 1-ին ու «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ Ավետիս Համբարձումի Վարոսյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված և «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով, թիվ 05100011/090222/0004423 ապրանքների հայտարարագրով ձևակերպված, ընդհանուր 6.6 կգ բրուտտո քաշով, 82,987 դրամ մաքսային արժեքով, ոչ էլեկտրական լուսավորող սարքերը CYALUME (200 հատ) (այսուհետ՝ գույք)՝ որպես պետական սեփականություն փոխանցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարիքների համար օգտագործելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն ապահովել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ